



ՔԱՆԻ՞ՆՈՐ ՏԱՐԻ ՈՒՆԻՆ ՅԱՅԵՐԸ

Հայերը ունեցած են երեք Նոր Տարի, որոնք կոչուած են՝ Ամանոր, Նաւասարդ կամ Կաղանդ:

Ժամանակին, մեր նախնիները Նոր Տարին կը դիմաւորէին Մարտ 21-ին, գարնանային գիշերահաւասարի օրը:

Այդ մէկը պատահական ընտրութիւն չէր: Այդ հեռաւոր ժամանակներուն հայ քուրմերը իրենց բազմամեայ դիտարկումներով նկատի առած էին, որ բնութիւնը յարութիւն կ'առնէ գարնան սկիզբը: Այդ օրը հայերը կոչեցին Նոր Տարի կամ Նոր Տարեգլուխ եւ տօնախմբութեամբ փառաբանեցին բնութեան զարթօնքը եւ հողագործի աշխատանքը, աղերսելով աստուածներուն, որ բերքառատ դարձնեն տարին:

Հայկական երկրորդ տարեգլուխը՝ Նաւասարդը, եղած է Օգոստոս 11-ին:

Ըստ աւանդութեան, Հայկ Աղեղնաւորը Վայոց Ձոր գաւառի մէջ սպանած է բռնակալ Բելին եւ ազատութիւն պարգեւած իր տոհմին ու բոլոր հետեւորդներուն: Այդ ժամանակէն, հայերը Նոր Տարին սկսած են տօնել Օգոստոս 11-ին:

Օգոստոսեան տօնը հայերը կոչած են Նաւասարդ, որ կը նշանակէ Նոր Տարի (Նաւ = Նոր, Սարդ = Տարի)






Նաւասարդի ամենամեծ հանդիսութիւնը տեղի կ'ունենար Արածանի գետի ափին, Նպատ լեռան մօտ: Տօնախմբութեան ներկայ կ'ըլլային երկրին թագաւորն ու թագուհին, զօրապետեր, նաեւ՝ հայկական բանակը: Այնտեղ կու գային Հայաստանի բոլոր գաւառներէն: Տօնախմբութիւնը օրեր կը տւէր:


20-րդ դարու Սիմէն Երեւանցի Կաթողիկոսին տոմարով Յունուար 1-ը ընդունուեցաւ որպէս Նոր Տարուան սկիզբը: Բայց մինչ այդ, Հայաստանի տարբեր վայրերուն մէջ եւ հայկական տարբեր գաղթավայրերուն մէջ, հայերը արդէն սկսած էին Նոր Տարին նշել Յունուար 1-ին:



Թիւրք ՊԱՏՐԱՍՏԵՆՆԵՐ՝ ՄԱՐՏԻՆԻ ԱՇԽԱՆՆԵՐԻՆ
ՆԱՎԱՍԱՐԴՆԵՐ՝ ՈՒՆԻՆ ԲԵՐԻՇԵՆՆԵՐ

Փորձե՛լուծել:

 = 27
 = 29
 = 
 = ?



Պատասխաններ: 9, 1, 10



Գունաւորե՛լ հետեւեալ պատկերը:



Իւրաքանչիւր խաղալիքի մօտ արձանագրե՛ծ առին վրայ գտնուող համապատասխան թիւը:






Գտի՛ր 10 տարբերութիւններ երկու պատկերներուն միջեւ:



ԼՈՒՑԿԻ ԾԱԽՈՂ ԱՂՋԻԿԸ



Ան կը վախնար տուն վերադառնալէ. ամբողջ օրը անցուցած էր առանց նոյնիսկ մէկ տուփ լուցկի ծախելու: Չէր համարձակէր հօրը ներկայանալ առանց դրամի, ան անպայման պիտի բարկանար վրան, թերեւս ալ ծեծեր գինք, ինչպէս յաճախ կ'ըներ, երբ տուն վերադառնար առանց դրամի:

Յետոյ, ի՞նչ տարբերութիւն ուներ տունը փողոցէն: Այն տունը, որուն մէջ կը բնակէր հօրը հետ, շինուած էր սնտուկներէ փրցուած տախտակներով: Հովը ուզածին պէս ներս կը մտնէր, հակառակ անոր որ տախտակներուն ծակտիկները գոցուած էին թուղթով ու լաթի կտորներով:

Հիմա աղջնակը, առանձին է գիշերուան մէջ: Ծուկաները գոց են: Մարդ չկայ, մարդ չի գթար իր վիճակին: Երեսները սառեցան, ինչպէս նաեւ՝ ձեռքերը: Հագիւ կրնար զանոնք շարժել: Կրակ չունէր, որ տաքնար. ուներ միայն՝ լուցկիի տուփեր...: Եթէ մաս մը վառէր տաքնալու համար, հայրը, ա՛յ, խորթ հայրը կը բարկանար վրան:

Ձիւնը, իր կարգին ուրիշ անգութ մը, շարունակեց իջնել ու իջնել, մինչեւ որ ծածկեց աղջկան երկար ոսկեգոյն մազերը: Ա՛լ չդիմացաւ: Մտածեց լուցկի մը վառել, միայն մէկ լուցկի, ձեռքը տաքցնելու համար: Երկար տատամսեցաւ: Վառէ՛ր, չվառէ՛ր: Կարելի չէր դիմանալ: Վերջապէս լուցկի մը առաւ տուփէն, վառեց: Լուցկիին լոյսը տարածուեցաւ չորս կողմը: Այնպէս թուեցաւ աղջկան, որ վառարանի մը մօտիկն է, որմէ քաղցր տաքութիւն մը կը հոսի դէպի իր կողմը: Աշխուժացաւ լուցկի ծախող աղջիկը, ուզեց մօտենալ վառարանին, ձեռքերը տաքցնելու համար: Սակայն լուցկին մարեցաւ, վառարանը անհետացաւ: Մութը պատեց ամեն կողմ եւ աղջիկը սկսաւ կրկին ու աւելի՛ տառապիլ պաղէն:



Լուցկի մը եւս վառեց: Իրեն այնպէս թուեցաւ, որ իր կռթնած պատը թափանցիկ դարձաւ եւ ինք յաջողեցաւ տեսնել լուսաւորուած սենեակ մը, կեդրոնը սեղան, սեղանին վրայ համադամ կերակուր, խմիչք եւ պտուղ:

Իրեն այնպէս թուեցաւ, որ արծաթէ պնակին մէջէն, տապկուած սագը ցատկեց եւ դէպի իրեն սկսաւ գալ:

Բայց լուցկին կրկին մարեցաւ: Այդ վայրկեանին իսկ, ամեն ինչ կրկին անհետացաւ. Ոչ լուսաւոր սենեակ մնաց, ոչ համադամ կերակուրներով լեցուն սեղան: Ընդհակառակն, աւելցաւ աղջկան անօթութիւնը եւ սկսաւ աւելի դողալ:

(Շարունակելի)

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ



Երբ ուժ մը կը բանի որոշ ուղղութեամբ կը կոչուի ներգործութիւն, իսկ ուրիշ ուժ մը երբ բանի հակառակ ուղղութեամբ կը կոչուի հակազդեցութիւն:

Օրինակի համար, ուռած փուչիկ մը թող տալով, կը նկատենք, թէ դուրս ժայթքող օդը (ներգործութիւն) գայն հակառակ ուղղութեամբ կը մղէ (հակազդեցութիւն):

Նմանապէս, հրթիռ մը յառաջ կը մղուի շնորհիւ ետեւէն ժայթքող կազերուն ներգործութեան դէմ ելլող հրթիռին հակազդեցութեան:

Երբ վառելանիւթը կ'այրի, կ'արտադրէ դուրս ժայթքող կազեր, որոնք յառաջ կը մղեն հրթիռը: Ներգործութիւնն ու հակազդեցութիւնը կ'ըլլան միշտ իրարու հաւասար, սակայն կ'ունենան հակառակ ուղղութիւն:

ԳԵՏԻ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՆ ՈՒԺԸ

Մակոյկ մը, որ կը փորձէ գետի մը ափէն ճիշդ դիմացի կետին ուղղութեամբ նաւարկել, իր նպատակակետէն բաւական անդին պիտի հասնի միւս ափին վրայ՝ գետին հոսանքին բանեցուցած ուժին պատճառով:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մագնիսականութիւնն ալ անտեսանելի ուժ մըն է, որ մագնիսի մը բեւեռներուն միջեւ կը բանի: Մագնիսները կը քաշեն կարգ մը մետաղներ: